ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ·ИНФОРМАЦИЯ„

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1963 թ. մարտի 9-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին նախորդեցին ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, հասարակական և բժշկական գիտությունների բաժանմունքների ժողովները։

Ընդհանուր ժողովը, որի աշխատանքներին բացի ակադեմիայի անդամներից և հիմնարկների աշխատակիցներից մասնակցում էին նաև Երևանի գիտա-հետազոտական մյուս ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, արտադրական ձեռնարկությունների, մամուլի ներկայացուցիչներ, ընդարձակ ներածական ճառով բաց արեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Ակադեմիայի պրեզիդենտը ընդհանուր գծերով բնորոշեց Սովետական Միության տնտեսության, կուլտուրայի և գիտության բուռն զարգացումը ՍՄԿՊ XXII համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում, ընդգծեց, որ կոմունիզմի կառուցման գործում ձեռք բերված հոյակապ նվաճումների հետ միասին կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ մեր երկրի գիտնականները առաջընթաց քայլ կատարեցին համաշխարհային գիտության բոլոր բնագավառներում նոր, առավել առաջավոր բնագծեր գրավելու համար։ Սովետական գիտության հետագա ծաղկման գործում կարևոր նշանակություն կունենան գիտության բնագավառում տեղի ունեցող վերակառուցումները, որոնք բխում են ՍՄԿՊ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումներից։

Ակադեմիայի 1962 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանը։

Մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման և հայրենական գիտության զարգացման ընդհանուր գործում ինչպես անցյալում, այնպես էլ 1962 թ. իր ավանդը ներդրեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան,— ասաց զեկուցողը։ —Ակադեմիայի 35 գիտական հիմնարկները կատարեցին հետազոտություններ 95 պրոբլեմի և 549 թեմայի գծով, որոնցից ավարտվեցին 234-ը։ Պրոբլեմներից 26-ն ունեն համամիութենական նշանակություն և կոորդինացվում են ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի գիտա-հետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի կողմից։

Ակադեմիայի գիտական աշխատանքների հիմնական նվաճումների մեջ զեկուցողը առաջին նշեց այն մեծ հետաքրքրություն ներկայացնող արդյունքները, որոնք ստացվել են Իյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանում՝ գալակտիկաների միջուկների ուսումնասիրության բնագավառում։ Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս անելու նոր եզրակացություններ գալակտիկաների միջուկների էվոլյուցիոն գերի և աստղերի գերիսիտ կոնֆիգուրացիաների վերաբերյալ։ Այստեղ յուրացվեց մետրանոց գիտակով սպեկտրալ գիտումների մեթոդիկան՝ աշխարհում ամենամեծ մետրանոց օբյեկտիվ պրիզմայի օգնությամբ։ Այս հնարավորություն տվեց ստանալու մի քանի գալակտիկաների միջուկների և պլանետար միգամածությունների մի շարք սպեկտրներ, այդ թվում իոնիզացված ջրածնի ամպեր։ Նշվեց, որ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում կատարված աշխատանքներն ունեն կարևոր նշանակություն ինչպես ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների ամբողջ կոմպլեքսի զարգացման, այնպես էլ ժամանակակից տեխնիկայի զարգացման հետ կապված որոշ պրոբլեմների լուծման համար։ Այստեղ ավարտված է կոմպլեքս տիրույթում ասիմպտոտական մոտավորությունների տեսությանը նվիրված աշխատանքների ցիկլը, լուծված են առանձգականության մաթեմատիկական տեսության որոշ տարածական խնդիրներ, ստացված են նոր արդյունքներ անիզոտրոպ շերտավոր թաղանթներ ստատիկ և դինամիկ կայունության և տատանումների վերաբերյալ։

Մեծարժեք աշխատանքներ են կատարվում ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում՝ գերբարձր հաճախականության անտենայի սիստեմի մեծ երկնայելանոց անտենայի

ռեակցիան ուղղությամբ։ Զգալի չափով մեծացավ հաշվողական մաթեմատիկայի, տեսական կիբեռնետիկայի, մաթեմատիկական լեզվաբանության և մեքենայական թարգմանության բնագավառում տարվող աշխատանքի ծավալը, բարձրացավ նրա որակը, լուծվեցին կիրառական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ։ Ստացվեց մասնագիտական տեքստի առաջին փորձնական թարգմանությունը ռուսերենից հայերեն։

Այնուհետև զեկուցողը կանգ առավ տեխնիկական գիտությունների բաժանմունքի հիմնարկների երկրաբանական, էներգետիկայի, ջրային պրոբլեմների, օրգանական քիմիայի, գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտների ձեռք բերած հաջողությունների վրա։

Զեկուցողը նշեց, որ երկրաբանական ինստիտուտում բացահայտված են Հայկական ՍՍՌ հյուսիսային շրջանների պղնձային և կապարա-ցինկային հանքավայրերի ձևավորման ու տարածական տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները, որոնք հնարավորություն են տալիս գնահատել հանքավայրերի հեռանկարները և նպատակասլաց ուղղություն տալ որոնման ու հետախուզական աշխատանքներին։ Զոլի, Քաջարանի, Ալավերդու հանքատեսակների հանրաքարի կազմում հայտնաբերված են նոր արժեքավոր բաղադրիչներ, որոնց անջատման հնարավորությունը բարձրացնում է հանքավայրերի արդյունաբերական նշանակությունը։ Նոր, արժեքավոր տվյալներ են ստացված ռեսպուբլիկայի տերիտորիայի երկրաբանական կառուցվածքի ու երկրաբանական զարգացման վերաբերյալ։

Օրգանական քիմիայի ինստիտուտում քիմիական ռեակցիաների մեխանիզմի և նյութերի կառուցվածքի ու նրա հատկությունների միջև եղած կապի պրոբլեմին նվիրված հետազոտությունները հանգեցրին ամոնյակային ազոտի բոլորովին նոր տիպի վերախմբավորման, ճեղքման ռեակցիայի, ինչպես նաև ացետիլենի քիմիայի բնագավառում ացետիլեն-ալլեն-կումուլենային տիպի մի նոր շափազանց հետաքրքիր իզոմերիզացիայի հայտնաբերման։ Հայտնաբերված տեսական լուրջ նշանակություն ունեցող այդ նոր օրինաչափությունները հնարավորություն են տալիս մշակելու օրգանական միացությունների զանազան դասերին պատկանող նյութերի ստացման նոր ուղիներ ու նոր եղանակներ։

Էներգետիկայի ինստիտուտում զգալի աշխատանք կատարվեց էներգետիկայի և էլեկտրիֆիկացիայի պրոբլեմների հետազոտման մի շարք խնդիրներում կիբեռնետիկայի կիրառման վերաբերյալ։ Այստեղ մշակված, պատրաստված և շահագործման են հանձնված էներգետիկայիս և ուրիշ տեխնիկական գիտություններին վերաբերող ինժեներական խնդիրների վճռման համար օգտագործվող դիսկրետ գործողության էլեկտրոնային հաշվող մեքենա, էլեկտրական սիստեմների մոդելի կապակցումը անընդհատ գործող մաթեմատիկական մեքենայի հետ, որը թույլ է տալիս էներգասիստեմների ռեժիմների հավասարումների լիակատար մոդելացումը։ Վճռվա՝ են մի շարք խնդիրներ՝ կապված Անդրկովկասի էներգասիստեմի ստատիկ և դինամիկ կայունության հետ։ Անդրկովկասի էներգասիստեմում փորձարկումները հաստատեցին կատարված հաշվարկների և հետազոտման բարձր ճշտությունը։

Բնության մեջ տեղի ունեցող սեյսմիկական երևույթները լաբորատոր պայմաններում մոդելների վրա ավելի ռացիոնալ կերպով ուսումնասիրելու համար գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտում ստեղծված է աշխարհում առաջին փորձնական էլաստիկական սեյսմիկական հարթակը, ծրագրային զեկավարությամբ, որն ի տարբերություն մինչև այդ գոյություն ունեցող հարթակների, բնդունակ է առաջացնել տարածվող սեյսմիկական ալիքներ։ Մշակվեց նաև փոքր մոդուլ ունեցող նյութերի մեխանիկական հատկությունների ուսումնասիրման որոշակի մեթոդիկա։

Ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Մ. Ս. Մկրտչյանի զեկուցման մեջ մեծ տեղ էր հատկացված կենսաբանական և բժշկական գիտությունների բաժանմունքների հիմնարկների գործունեությանը, որոնց զարգացումը հաշվետու տարում բնթացավ անհամաչափ։ Նրանցից նուրբ օրգանական քիմիայի, բիոքիմիայի, սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտները, ագրոքիմիայի լաբորատորիան ստեղծեն իրենց դեմքը, գլխավոր ուղղությունը և պայմանները՝ գիտության ժամանակակից մեթոդների ու եղանակների լայն կիրառման համար։ Այս նրանց հնարավորություն է տալիս կիրառել հետազոտությունների նուրբ եղանակներ և թափանցել ուսումնասիրվող հարցերի, երևույթների ու պրոցեսների ներքին էության մեջ։ Այսպես, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում զգալի աշխատանք է կատարվել քիմիական նյութի կառուցվածքի և նրա բիոլոգիական ազդեցության միջև եղած կապերի օրինաչափությունների պարզաբանման, ինչպես և բնտրողական ազդեցություն ունեցող միացությունների նպատակադիր սինթեզի եղանակներ մշակելու ուղղությամբ։ Ինստիտուտն իր տեսական հետազոտությունների հիման վրա սինթեզել է

գրեպարատներ սրտանոթային սիստեմի ախտաբանական վիճակի՝ ստենոկարդիայի, միոկարդային ինֆարկտի, հիպերտոնիայի կանոնավորման համար, կենտրոնական և պերիֆերիկ նյարդային խախտումների հետ կապված հիվանդությունների՝ էպիլեպսիայի, պարկինսոնիզմի, խորեայի և այլ հիվանդությունների բուժման համար։

Բիոքիմիայի ինստիտուտը շարունակել է ուսումնասիրություններ կատարել գամմա-ամինոկարագաթթվի և նրա մի քանի ածանցյալների բիոքիմիական դերի պարզաբանման ուղղությամբ։ Գամմա-ամինոկարագաթթվի համեմատաբար մեծ քանակության հայտնաբերումը գլխուղեղում ինքնին մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Բայց ինչպիսի՞ն է այդ նյութի դերը գլխուղեղում՝ հայտնի չէր։ Բիոքիմիկոսների հետազոտությունների շնորհիվ պարզվել է, որ գամմա-ամինոկարագաթթուն լուրջ դեր է կատարում գլխուղեղում տեղի ունեցող սննդառական պրոցեսներում, հայտնաբերելով նմանություն ինսուլինին և գանգլեոբլոկացնող նյութին։

Բուսաբանական ինստիտուտը առաջ է տարել այնպիսի կարևոր թեմայի մշակման գործը, ինչպիսին է բույսերի անհատական զարգացումը, նպատակ ունենալով լուծելու բուսական օրգանիզմների նպատակադիր ղեկավարումը, օրինակ, այնպիսի ուղղությամբ, ինչպիսին է բույսերի ամենամյա պտղաբերման ապահովումը։ Հետաքրքրական տվյալներ են ստացվել բույսերի մեջ տեղի ունեցող նյութափոխանակության վերաբերյալ։

Ակրոքիմիայի լաբորատորիան իր վրա է վերցրել մի շարք խնդիրների մշակումը, խնդիրներ, որոնք շատ կարևոր են գիտության և սննդային միջավայրում գյուղատնտեսական պրակտիկայի համար։ Դրանցից մեկը անհող կուլտուրաների մշակումն է։ Լաբորատորիայի աշխատակիցները հանձն են առել մեր պայմաններում գյուղատնտեսական մի շարք կուլտուրաներ մշակել և բերք ստանալ անհող սորնդային միջավայրում և՛ բաց տարածությունում, և՛ փակ, առաջին դեպքում զգալի կերպով խախտելով բույսերի մշակման սեզոնայնությունը, երկրորդ դեպքում լրիվ խախտելով սեզոնայնությունը։

Սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտում լայն ճակատով տարվել են կլինիկական, էլեկտրա-կարդիոգրաֆիական, բալիստոկարդիոգրաֆիական, ռենտգենոլոգիական հետազոտություններ, այդ թվում նաև գոնգում և սրտի խոռոչների կոնտրաստ հետազոտություններ։ Այստեղ կարևոր դեր էին կատարում սրտի հիվանդությունների վիրահատական բուժման ժամանակակից մեթոդները։ Կարճ ժամանակում կատարված է մոտ 90 վիրահատություն բավարար արդյունքներով։

Զեկուցողը միաժամանակ նշեց կենսաբանական գիտությունների բաժանմունքի հիմնարկների աշխատանքներում տեղ գտած թերությունները։ Կատարվող շատ օգտակար աշխատանքների հետ մի շարք բնագավառներում հետազոտություններն իրականացվում են ցածր մակարդակով, որը առաջին հերթին վերաբերում է բուսաբանությանը և կենդանաբանությանը, որոշ չափով նաև միկրոբիոլոգիային և հիդրոբիոլոգիային։

Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գործունեության վրա, որոնք շարունակում էին մշակել և լուսաբանել հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի պրոբլեմները, ինչպես նաև փիլիսոփայության և արևելագիտության հարցերը։

Բաժանմունքի հիմնարկների գիտա-հետազոտական աշխատանքը,—ընդգծեց զեկուցողը,—ընթացավ պարտիայի XXII համագումարի որոշումների և ՍՄԿՊ նոր ծրագրի լույսի տակ, որոնք նոր խնդիրներ են առաջադրել հասարակական գիտություններին։ Հասարակական գիտությունների ապագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան ՍՍՌՄ ԳԱ ընդհանուր ժողովի որոշումները՝ նվիրված հասարակական գիտությունների զարգացման խնդիրներին։ Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկներում մշակվում էր մոտ 250 թեմա, որից ավարտվեց 134-ը։ Նրանց զգալի մասը նվիրված է արդիականության կարևոր հարցերին՝ Սովետական Հայաստանի պատմության, սովետահայ գրականության պատմության, ժամանակակից հայոց լեզվի հարցերին, Մերձավոր Արևելքի նորագույն պատմության հարցերին և այլն։ Հիմնարկների մի զգալի մասի համար արդեն բնորոշ է խոշոր ընդհանրացնող աշխատությունների մշակումը և հրատարակումը։ Պատմության ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքների կենտրոնում դրված են «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր ակադեմիական հետազոտության հրատարակման նախապատրաստական աշխատանքները։ Այդ կարևոր և պատասխանատու աշխատությունը պատրաստվում է պատմության ինստիտուտի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աշխատողների կոլեկտիվների և այլ հիմնարկների համապատասխան մասնագետների կողմից։ Եթե 1961 թ. պատմության ինստիտուտը մշակում էր 12 թեմա կապված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հետ, ապա 1962 թ. ինստիտուտը

մշակում էր 23 թեմա բազմհատորյակի դծով, որոնցից 17-ը կատարված են։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում արդեն 1964 թ. կավարտվեն «Հայ ժողովրդի պատմության» առաջին հատորի վրա տարվող աշխատանքները։

Պատմության ինստիտուտը շարունակում է մշակել նաև առանձին, մոնոգրաֆիկ բնույթի թեմաներ։ 1962 թ. ինստիտուտը հրատարակել է ԳԱ թղթակից-անդամ Ս. Պ. Ադայանի «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորների պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար», Ա. Հակոբյանի «Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին», Հ. Անասյանի «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում XVII դարում» աշխատությունները, հոդվածների ժողովածու Մեսրոպ Մաշտոցի մասին և այլ աշխատություններ։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը ձեռնարկեց վաղ Հայաստանի կարևորագույն կենտրոններից մեկի՝ Արմավիրի նախնական հետազոտական բնույթ կրող պեղումները։ Նախնական արդյունքները ցույց տվեցին, որ Արմավիրի պեղումները մեծ նշանակություն կունենան հելլենիստական և վաղ ֆեոդալական Հայաստանի պատմությունը և մշակույթը ուսումնասիրելու տեսակետից։ Այդ իսկ պատճառով ակադեմիայի նախագահությունը Արմավիրի հուշարձանների հետագա հնագիտական հետազոտությունը դարձրել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնական խնդիրը։ 1962 թ. հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է երկու աշխատություն՝ «Գառնիի պեղումների արդյունքների» 3-րդ պրակը և «Հայ ժողովրդական հեքիաթների» 3-րդ հատորը։

Զգալի աշխատանք է կատարված գրականության ինստիտուտում։ «Հայ նոր գրականության պատմության» I և II հատորների հրատարակումը կարևոր ներդրում է սովետահայ գրականագիտության ասպարեզում։ Գրականության ինստիտուտը շնորհակալ աշխատանք է կատարում հայ դասական հեղինակների երկերի հրատարակության բնագավառում։

Արվեստի ինստիտուտը շարունակում էր մշակել պրոբլեմներ՝ կապված հայ արվեստի հիմնական ասպարեզների՝ երաժշտության, ճարտարապետության, գեղարվեստի, թատրոնի հետ։ Ինստիտուտը հրատարակել է 7 աշխատություն, այդ թվում «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», «Սեդրակ Առաքելյան», «Ակնարկ արևմտահայ թատրոնի պատմության» և այլն։ Հրատարակվել է նաև Ա. Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի 7 հատորը։

Լեզվի ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքների կենտրոնում գրված են հայոց լեզվի գիտական քերականության, հայոց լեզվի պատմության, բարբառների հարցերի ուսումնասիրումը, բառարանների և հայոց գրական լեզվի քարտարանի ստեղծումը։ Հաշվետու տարում ինստիտուտը հրատարակել է Ա. Աբրահամյանի «Իայր ժամանակակից հայերենում», Գ. Ջահուկյանի «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» և այլ ուսումնասիրություններ։

Փիլիսոփայության սեկտորը 1962 թ. հրատարակել է 10 աշխատություն, որոնք նվիրված են գիտական կոմունիզմի, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի, բուրժուական դասադասարախոսության քննադատության, հայ փիլիսոփայության պատմության և սոցիալիստական իրավունքի հարցերին։ Սեկտորը ձեռնամուխ է եղել «XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմություն» երկհատորյա աշխատության ստեղծմանը։ Պետական համալսարանի ամբիոնի աշխատակիցների հետ պատրաստվում է բուհական ձեռնարկ՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դծով։

Արևելագիտության սեկտորը շարունակում էր Մերձավոր Արևելքի երկրների պատմության, տնտեսագիտության և մշակույթի պրոբլեմների հետազոտությունը։ Սեկտորը 1962 թ. հրատարակել է 4 աշխատություն, այդ թվում՝ Ե. Սարգսյանի «Օսմանյան կայսրության գավթողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին», «Սովետական բրդական գրականության բիբլիոգրաֆիա» և այլն։

Զեկուցողը ողջունելի և գրական համարեց այն հանգամանքը, որ հասարակական գիտությունների բաժանմունքի մի շարք հիմնարկներ (գրականության, պատմության ինստիտուտները, արևելագիտության սեկտորը) որոշ քայլեր են կատարել սփյուռքահայության պատմության և մշակույթի ուսումնասիրման ուղղությամբ։ Գրականության ինստիտուտը կազմակերպել է գիտական սեսիա՝ նվիրված սփյուռքահայ գրականության հարցերին, պատմության ինստիտուտի և արևելագիտության սեկտորի գիտահետազոտական աշխատանքների պլաններում տեղ են գտել թեմաներ՝ կապված հայկական տարբեր գաղութների պատմության հետ։

1962 թ. հասարակական գիտությունների բաժանմունքի դծով կազմակերպվել են մի շարք գիտական սեսիաներ, այդ թվում Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտական սեսիան, պատմության ինստիտուտի կողմից կազմակերպված՝ Զեյթունի հերոսական պատ-

մության 100-ամյակին նվիրված գիտական սեսիան, մեր պատմության ինստիտուտի և Ուկրաինական ՍՍՌ ԳԱ պատմության և հասարակական գիտությունների Լվովի ինստիտուտների համատեղ սեսիան (Կիև—Լվով), նվիրված հայ և ուկրաինական ժողովուրդների պատմության կապերին և բարեկամությանը.

Ակադեմիայի սիստեմում 1962 թվին գործում էին 26 գրադարան՝ ֆունդամենտալ գրադարան, հասարակական գիտությունների գրադարան, կենսաբանական գիտությունների բաժանմունքի գրադարան և ԳԱ գիտական հիմնարկների 23 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդերը ար 1-ը հունվարի 1963 թ. կազմում էր 1.898.500 գիրք: Միայն 1962 թվին ձեռք է բերված 121.200 գրադարանային միավոր: Գրքափոխանակությունը դարձել է ակադեմիայի ֆոնդերի կոմպլեկտավորման հիմնական աղբյուրներից մեկը:

Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս տպագրվել են «ՀՍՍՌ ԳԱ զեկույցները», «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագրեր»— ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, երկրաբանական, քիմիական, բժշկական, կենսաբանական, հասարակական սերիաներով: Հրատարակվել է «Պատմա-բանասիրական հանդես»:

Թողարկվել է 183 անուն աշխատանք՝ 2069,5 մամուլ ծավալով, 190.000 տպաքանակով:

1962 թ. միջազգային գիտական կապերը իրագործելիս, հիմնական ուշադրություն դարձվեց ժողովրդա-դեմոկրատական երկրների գիտական հիմնարկների հետ կապերը ընդլայնելուն ու խորացնելուն, ինչպես նաև գիտական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական երկրների հետ գիտական կապերի էֆեկտիվ օգտագործմանը: Կայունացավ գիտնականների արտասահման մեկնելու և արտասահմանից գիտնականների ընդունման գործը: 1962 թվին արտասահման մեկնեցին 26 հոգի, արտասահմանից ընդունվեց 38 հոգի:

Խոշոր իրադարձություն հանդիսացավ Աստղագետների միջազգային խորհրդի Գործկոմի նիստի Երևանում անցկացնելը, որը կայացավ այդ խորհրդի նախագահ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի նախագահությամբ: Մեր գիտնականներից մի քանիսը անձամբ հրավիրվել են արտասահմանյան երկրներ դասախոսություններ կարդալու համար: Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին շնորհվել է Կանբերայի համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան, որը աշխարհահռչակ գիտնականի նոր, 11-րդ կոչման արժանացումն է արտասահմանյան գիտական հաստատությունների կողմից:

Նշելով ակադեմիայի հիմնարկների ձեռք բերած հիմնական նվաճումները, զեկուցողը լուրջ քննադատության ենթարկեց նաև նրա առանձին ոլորտներում տեղ գտած թերությունները: Նշվեց մասնավորապես այն, որ ակադեմիայի ցանցի որոշ հիմնարկներում չի վերացված բաղմաթեմայնությունը, որի պատճառով հատկացվող միջոցները և հաստիքները ցրվում են մանր թեմաներ կատարելու համար, չեն կենտրոնանում ինստիտուտի առջև դրված հիմնական խնդրի կատարման շուրջը: Դա է հիմնական պատճառը, որ շատ ինստիտուտներում չեն կատարվում ինչպես տեսական, այնպես էլ ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող խոշոր գիտական աշխատանքներ: Օրինակ, հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում դրեթե չեն մշակվում թեմաներ կոլեկտիվ ձևով, իսկ ռադիոբիոլոգիայի սեկտորը իր գոյության մոտ 5 տարիների ընթացքում չկարողացավ ճշտել իր պրոֆիլը և ունենալ որոշակի դեմք: Բացակայում է առանձին թեմաների կոմպլեքսային ուսումնասիրությունը: Մի քանի ինստիտուտներում քիչ են օգտագործվում ժամանակակից էքսպերիմենտալ մեթոդները ու սարքավորումները:

Զեկուցողը հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների ուշադրությունը բևեռեց պարտիայի XXII համագումարի որոշումների անշեղ կատարման վրա, ընդգծեց, որ հասարակական գիտությունների բնագավառում աշխատող գիտական աշխատակիցները ընդհուպ պետք է մոտենան կոմունիստական շինարարության հարցերի մշակմանը, ստեղծեն դաղափարապես հագեցած, մեր մարդկանց սոցիալիստական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակող աշխատություններ, պայքարեն թշնամական դաղափարախոսությունների դեմ:

Նշվեց նաև, որ ակադեմիայի նախագահությունը և բաժանմունքները երբեմն անհրաժեշտ պահանջկոտություն չեն ցուցաբերում գիտական բարձրորակ կադրերի պատրաստման, բոլոր օղակներում գիտական ղեկավարությունը ուժեղացնելու համար: Խնդիր դրվեց է՛լ ավելի բարձրացնել գիտական կադրերի որակը, կատարելագործել ղեկավարման մեթոդները, ավելի սկզբունքային կերպով լուծել հիմնարկների առջև դրված խնդիրները, գիտական խորհուրդները ամենուրեք վերածել կոլեկտիվ ղեկավարման իսկական օղակների, քրտնաջան աշխատանք տանել բոլոր լաբորատորիաները, բաժինները, ինստիտուտները գիտական տեսակետից հեղինակություն վայելող կադրերով ամրացնելու ուղղությամբ:

Ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանի զեկուցման քննարկմանը մասնակցեցին ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը, ԳԱ ակադեմի-

կոս Ի. Վ. Եղիազարովը, պատմական գիտությունների դոկտոր, հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Ն. Առաքելյանը, Կաուչուկի համամիութենական ինստիտուտի Երևանի ֆիլիալի դիրեկտոր Ն. Կարապետյանը, հիդրոմելիորացիայի ինստիտուտի դիրեկտոր Գ. Ադախանյանը, ԳԱ ակադեմիկոս Վ. Հ. Գուլքանյանը։

Ակադեմիայի 1962 թ. գործունեությունը լայնորեն քննարկվեց նաև ակադեմիայի բոլոր բաժանմունքների ժողովներում։ Բացի դրանից բաժանմունքներում լսվեցին 22 գիտական զեկուցումներ զանազան հիմնարկներում կատարված առավել կարևոր աշխատանքների մասին։ Ակադեմիայի ընդհանուր ժողովը լսեց ԳԱ թղթակից-անդամ Ա. Բ. Նալբանդյանի զեկուցումը «Ֆորմալդեհիդի, խեժերի, պլաստմասսաների և պոլիֆորմալդեհիդի սինթեզի համար կարևորագույն հումքի ստացման նոր արդյունաբերական եղանակի մասին»։

Ընդհանուր ժողովում ընտրվեցին նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրվեցին պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Երեմյանը, կոմպոզիտոր Արամ Եղիայի Խաչատրյանը, քիմիկոսներ Մանվել Գարեգինի Մանվելյանը և Արամ Բագրատի Նալբանդյանը։ Թղթակից-անդամներ ընտրվեցին ազգությունագիտության գծով՝ պատմական գիտությունների դոկտոր Լևոն Ստեփանի Խաչիկյանը, էլեկտրաէներգետիկայի գծով՝ տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հրանտ Տիգրանի Ադոնցը, տեսական ֆիզիկայի գծով՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորներ Գրիգոր Մարգարի Զարիբյանը և Միքայել Լևոնի Տեր-Միքայելյանը, կենդանիների ֆիզիկայի գծով՝ դոկտոր-պրոֆեսոր Արտաշես Հովհաննեսի Քարամյանը, պատմության գծով՝ պատմական և բանասիրական գիտությունների թեկնածու Մարգար Ստեփանի Հասրաթյանը։ Այսպիսով, ակադեմիայի կազմում այժմ կան 39 ակադեմիկոս և 36 թղթակից-անդամ։

* * *

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրեց նախագահության նոր կազմ։ Համաձայն ակադեմիայի կանոնադրության, ակադեմիայի պրեզիդենտի նոր ընտրություններ կայանալու է մեկ տարի հետո։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ընտրվեց Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանը, ակադեմիկոս-քարտուղար՝ Սերգեյ Սեդրակի Մկրտչյանը։

Գիտությունների բաժանմունքների գծով ակադեմիկոս-քարտուղարներ ընտրվեցին՝ հասարակական գիտությունների բաժանմունքում՝ Մկրտիչ Գեզամի Ներսիսյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքում՝ Սերգեյ Նիկիտայի Մերգելյանը, տեխնիկական գիտությունների բաժանմունքում՝ Մարտին Վահանի Կասյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքում՝ Վարդան Հովհաննեսի Գուլքանյանը։ Հանձնարարվեց Բարդուղիմեոս Արտեմի Ֆանարջյանին մինչև նոր ընտրությունները շարունակել վարել բժշկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը։

Նախագահության ազատ անդամներ ընտրվեցին ԳԱ ակադեմիկոսներ Արտաշես Բալասիի Կարինյանը, Գագիկ Ստեփանի Դավթյանը, Արմեն Գեորգի Նազարովը։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերջին տարիները նշանավորվեցին սովետական արևելագիտության նոր հաջողություններով արևելյան ժողովուրդների անցյալի ու ներկայի գիտական ուսումնասիրության ասպարեզում։ Սովետական արևելագիտության նվաճումները ակնառու կերպով դրսևորվեցին Մոսկվայում 1960 թ. կայացած արևելագետների միջազգային XXV կոնգրեսում, որտեղ մի շարք հանգուցային հարցեր իրենց լուսաբանումը գտան սովետական գիտնականների զեկուցումներում ու հրապարակումներում։

Պակաս կարևոր նշանակություն չունեցավ նաև 1958 թ. Լենինգրադում գումարված Հին Արևելքի ուսումնասիրությանը նվիրված սեսիան, որին մասնակցում էին Սովետական Միության բազմաթիվ մասնագետներ։ Սեսիայի կարևոր արդյունքներից մեկն էր Հին Արևելքի պատմաբանների և բանասերների համամիութենական ընկերության ստեղծումը։ Այդ ընկե-

1 Այդ մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, N 2, էջ 323—325։